# ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:

# THE EPIDEMIC SITUATION ON COMMUNICABLE AND NON-COMMUNICABLE DISEASES IN ARMENIA.

# ЭПИДЕМИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО ИНФЕКЦИОННЫМ И НЕИНФЕКЦИОННЫМ ЗАБОЛЕВАНИЯМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ.

**ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023**

**SEPTEMBER 2023**

**СЕНТЯБРЬ 2023**

# ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Աղիքային վարակիչ հիվանդություններ**

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի սեպտեմբեր ամսին աղիքային վարակիչ հիվնադություններով պայմանավորված համաճարականյին իրավիճակը հարաբերականորեն հանգիստ է:

2023 թվականի սեպտեմբեր ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդության 1153 դեպք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շատ է մոտ 1.2 անգամ: Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի սեպտեմբեր ամսին աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել:

**Սուր շնչառական  հիվանդություններ**

2023 թվականի սեպտեմբեր ամսին արձանագրվել է ՍՇՎ-ով պայմանավորված ակտիվության աճ: Հիվանդացության ցուցանիշը կազմել է՝ 366.8, ինչը նախորդ օգոստոս ամսվա համեմատ (ցուցանիշ՝ 218.8) աճել է մոտ 1.6 անգամ, իսկ նախորդ՝ 2022թ-ի միևնույն ժամանակահատվածի համեմատ (ցուցանիշ՝ 791.4) ցածր է՝  2.1 անգամ: Ընդհանուր դեպքերի 73%-ը կազմում են 0-18 տարեկան երեխաները: Շտապ օգնության կանչերի 5%-ը պայմանավորված են ՍՇՎ-ով:

ՀՀ-ում համաճարակաբանական հսկողության շրջանակներում նշված ամսվա ընթացքում գրիպի վիրուսի հարուցիչներ չեն հայտնաբերվել: Այլ շնչառական վարակներից հայտնաբերվել են ռինովիրուսի, ռեսպիրատոր սինցիտիալ վիրուսի, ադենովիրուսի, մետապնևմովիրուսի և կորոնավիրուսային հիվանդության (SARS-COV-2) հարուցիչներ:

**Քիմիական թունավորումներ**

2023 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում արձանագրվել է քիմիական թունավորումների 220 դեպք, որոնց 40%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 60%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը 31.4%-ը թունավոր կենդանիների խայթոցի արդյունքում, 20%-ը՝ ալկոհոլային թունավորումները՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից, 18.6%-ը՝ դեղամիջոցներով՝ ինքնաբուժման, ինքնասպանության և ծնողի անուշադրության հետևանքով առաջացած, 15.9%-ը՝ օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից թունավորումներն են, 6.4%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 5.5%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից, 1.8%-ը՝ թունաքիմիկատներից, 0.4%-ը՝ խոտաբույսերից:

2023թ. սեպտեմբեր ամսին քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.1 անգամ:

**Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ**

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի սեպտեմբեր ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը նվազզել է՝ սույն թվականի սեպտեմբեր ամսին սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի դեպք չի արձանագրվել (2022 թվականին՝ 2 դեպք):

**Զոոնոզ և մակաբուծային հիվանդություններ**

Համաճարակային իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի հոկտեմբերի 11-ի դրությամբ ընդհանուր առմամբ համեմատաբար հանգիստ է: 2023 թվականի սեպտեմբերին չեն արձանագրվել վարակիչ հիվանդությունների՝ արբովիրուսային վարակների, ժանտախտի, կատաղության, ռիկետցիոզների, սիբիրյան խոցի, մալարիայի, լեյշմանիոզի տեղական դեպքեր :

2023 թվականի սեպտեմբերին գրանցվել են լեպտոսպիրոզի 2 դեպք, տուլարեմիայի 1 դեպք, Լայմի հիվանդության 7 դեպք:

**Կառավարելի վարակիչ հիվանդություններ**

2023 թվականի օգոստոս ամսին Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է եղել: Չեն գրանցվել պոլիոմիելիտի, դիֆթերիայի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի դեպքեր: Արձանագրվել է կարմրուկի բերովի դեպք, որը տեղայնացվել է: Սեպտեմբերի 30-ի դրությամբ գրանցվել է կարմրուկի լաբորատոր հաստատված 452 դեպք:

# EPIDEMIC SITUATION ON COMMUNICABLE AND NON-COMMUNICABLE DISEASES IN THE REPUBLIC OF ARMENIA

## Intestinal infectious diseases

In September 2023, the epidemic situation on intestinal infectious diseases is relatively calm.

In September 2023, 1153 cases of infectious intestinal disease were recorded in RA, which 1.2 times exceeds the same previous year period cases.

No outbreak of intestinal infectious diseases was recorded in September 2023 in the Republic of Armenia.

## Acute respiratory illnesses

In September 2023, ARI an increase in activity was recorded. The incidence rate: 366.8 per 100.000 population, which is about 1.6 times higher compared to the previous month (218.8), and 2.1 times lower compared to the same period of 2022 (index: 791.4). Children aged 0-18 make up 73% of all cases. 5% of emergency calls are caused by ARI.

As a result of laboratory research within the framework of sentinel surveillance, no pathogen of influenza was detected. Among other respiratory viruses rhinovirus, respiratory syncytial virus, adenovirus, metapneumovirus and SARS-COV-2 pathogens have been detected.

## Chemical poisoning

220 cases of poisoning were registered during September 2023, 40% of which were registered in Yerevan, 60% - in marzes. 31.4% of the recorded cases are from bites and stings of poisonous animals, 20% - alcohol poisonings from ingestion of high doses, 18.6% - drug poisoning are the result of self-medication, suicide and parental neglect, 15.9% - from the toxic effects of organic solvents, in particular, carbon monoxide and other household substances, 6.4% - from toxic effects of soaps and detergents, 5.5% from the effects of other and unspecified toxic substances, 1.8% - from pesticides, 0.4% from herbs.

Compared to the previous year, in September 2023, the incidence rate of chemical poisoning decreased 1.1 times.

## Parenteral acute viral hepatitises

Compared to the same previous year period, the incidence rate of parenteral acute viral hepatitises decreased: no cases of parenteral acute viral hepatitises recorded in September of the current year (2 cases were recorded in 2022).

## Zoonotic and parasitic diseases

As of October 11, 2023, the epidemic situation on zoonotic and parasitic diseases is relatively calm. In September 2023 no cases of infections such as arboviruses, plague, rabies, rickettsiosis, anthrax, malaria, leishmaniasis were recorded in the Republic of Armenia.

In September 2023, 2 cases of leptospirosis, a case of tularemia and 7 cases of Lyme disease.

## Vaccine-preventable infectious diseases

In September 2023 the epidemic situation in the Republic of Armenia in terms of vaccine-preventable infectious diseases was favorable. No cases of poliomyelitis, diphtheria, rubella, epidemic parotitis were recorded. An imported case of measles was recorded, which has been localized. As of September 30, 452 laboratory-confirmed cases were recorded.

## ЭПИДЕМИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО ИНФЕКЦИОННЫМ И НЕИНФЕКЦИОННЫМ ЗАБОЛЕВАНИЯМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

### Кишечные инфекционные заболевания

В Республике Армения эпидемическая ситуация, вызванная кишечными инфекционными заболеваниями, относительно спокойная.

В сентябре 2023 года было зарегистрировано 1153 случая кишечных инфекционных заболеваний, что в 1.2 раза превышает аналогичный период 2022г. В сентябре 2023 года вспышек кишечных инфекционных заболеваний зарегистрировано не было.

### Острые респираторные вирусные заболевания

В сентябре 2023 года в Армении был зафиксирован рост активности, обусловленный острыми респираторными вирусными инфекциями. Показатель заболеваемости составил 366.8, что по сравнению с предыдущим месяцем (показатель 218.8) увеличился в 1.6 раза. По сравнению с аналогичным периодом 2022 года (показатель 791.4) показатель ниже в 2.1 раз. 73% от общего числа случаев приходится на детей в возрасте от 0 до 18 лет. 5% от общего числа вызовов скорой помощи вызваны ОРВИ.

В рамках эпидемиологического надзора в результате лабораторных исследований образцов возбудителей вируса гриппа не обнаружено. Из других респираторных инфекций обнаружены возбудители риновируса, респираторно-синцитиального вируса, аденовируса, метапневмовируса и коронавирусной болезни (SARS-COV-2).

### Химические отравления

В течение сентября в Республике Армения было зарегистрировано 220 случаев химических отравлений, 40% из которых зарегистрировано в городе Ереване, 60% - в марзах. Большинство зарегистрированных случаев – 31.4% являются следствием укусов ядовитых животных, 20% - алкогольные отравления в результате приема высоких доз, 18.6% - отравление медикаментами в результате самолечения, с целью самоубийства и по невнимательности родителей 15.9% - от токсического воздействия органических веществ, в частности, угарного газа и других бытовых химических веществ, 6.4% - от токсического воздействия мыла и других моющих средств, 5.5% - в результате воздействия других и невыясненных токсических веществ, 1.8% - пестицидов, 0.4% - в результате приема в пищу различных трав и комнатных растений.

В сентябре 2023 года заболеваемость химическими отравлениями снизилась в 1.1 раза по сравнению с тем же периодом предыдущего года.

### Острые парентеральные вирусные гепатиты

В Республике Армения в авгисте 2023 года по сравнению с тем же периодом предыдущего года показатель заболеваемости острыми парентеральными вирусными гепатитами уменьшился – в сентябре текущего года не зарегистрировано ни одного случая острого парентерального вирусного гепатита (в 2022 году – 2 случая).

**Зоонозные и паразитарные заболевания**

Эпидемическая обстановка в Республике Армения по состоянию на 11 октября 2023 года в целом относительно спокойная.

В сентябре 2023 года в Республике Армения случаев инфекционных заболеваний (чумы, бешенства, риккетсиоза, арбовирусной инфекции, малярии, сибирской язвы, туляремии, лейшманиоза) зарегистрировано не было.

В сентябре 2023 года зарегистрировано 2 случая лептоспироза, 1 случай туляремии и 7 случаев болезни Лайма.

**Вакциноуправляемые инфекционные заболевания**

В сентябре 2023 года эпидемическая ситуация в Республике Армения по управляемым инфекционным заболеваниям была благоприятной. Случаев полиомиелита, дифтерии, краснухи, эпидемического паротита не зарегистрировано. Зарегистрирован завозной случай кори, который был локализован. По состоянию на 30 сентября зарегистрировано 452 лабораторно подтвержденных случая.